Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ՌՈՒՍՏԱՄ ՄԱԽՄՈՒԴՅԱՆԻ

ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Լիլիթ Վահեի Մելիքսեթյանի <<Հանրաքվեի որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի բարելավման արդի հիմնահարցերը>> թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ժողովրդավարական կարգ ունեցող պետություններում իշխանությունը ժողովրդին պատկանելու գաղափարը կյանքի կոչող ամենակենսունակ ինստիտուտներից մեկը հանրաքվեն է, որը տեսության մեջ դիտարկվում է ինչպես սոցիալական, այնպես էլ սահմանադրական ինստիտուտ (երևույթ): Անմիջական ժողովրդաիշխանության իրացման արդյունավետության բարձրացումը մշտապես եղել է արդիական ինչպես յուրաքանչյուր պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար:

Մեր պետությունում ժամանակ առ ժամանակ հանրաքվեի՝ որպես ժողովրդաիշխանության իրացման կառուցակարգի, վերաբերյալ ուսումնասիրություններ և հետազոտություններ կատարվել են, սակայն, մշտապես այն դիտարկվել է հայրենական օրենսդրության, սոցիալ-հոգեբանական բաղադրիչների համատեքստում՝ հաշվի առնելով նաև պրակտիկան: Մինչդեռ, հայրենական գրականության մեջ չկան այնպիսի աշխատություններ, կամ հետազոտություններ, որոնք հանրաքվեին անրադարձ կատարած լինեն՝ վեր հանելով այդ երևույթի ձևավորման էվոլյուցիան, միտումները, դրա ճակատագիրը հասարակական կառավարման համակարգում:

Այս մեկնաբանության համատեքստում Լիլիթ Մելիքսեթյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում:

Ատենախոսության մեջ հեղինակը համապարփակ վերլուծության է ենթարկել այն հարցը, ըստ որի, հանրաքվեն դիտարկվել է ոչ թե որպես նոր դարաշրջանի իրավական ինստիտուտ, այլ մարդկության պատմության ընթացքում միշտ նրան ուղեկցող և բնորոշ

երևույթ: Այնուհետև, շարունակելով անդրադառնալ հանրաքվեի սոցիալ-իրավական բովանդակության բացահայտմանը, հեղինակի պնդմամբ, եվրոպական պետություններում հանրաքվեն ոչ թե տեսական հետազոտությունների արդյունք էր, այլ քաղաքական-իրավական զարգացման օրինաչափությունների և որոշակի գործոնների ազդեցությամբ անտեսված երևույթի վերածնունդ: Ավելին, ինչպես ցույց են տալիս հասարակական կառավարման համակարգերի ավելի խորքային և լայն պատմագրական հետազոտությունները, հանրաքվեն, որպես անմիջական կառավարման ձև, ունի ժամանակագրական առումով ավելի հարուստ պատմություն, քան նույնանուն սահմանադրական ինստիտուտը:

Նկատի ունենալով, որ իրական փաստերի և հանրաքվեի տեսության միջև այս համատեքստում առկա են որոշակի հակասություններ, Հեղինակն առաջարկում է դրա լուծման տեսամեթոդական ուղղությունները իր չափորոշիչներով՝ հանրաքվեի հասկացությունը, հանրաքվեի՝ որպես սոցիալական ինստիտուտի և հանրաքվեի՝ որպես իրավական ինստիտուտի հասկացությունները:

Այնուհետև, Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է նաև Հանրաքվեն՝ որպես երրորդ հանրապետության սահմանադրական իրավական ինստիտուտ, սահմանադրության հիման վրա հետագայում ընդունված օրենսդրական կարգավորումները, միաժամանակ հղում կատարելով նաև միջազգային-իրավական փորձին: Առավել քան մեծ հատված հատկացնելով Շվեյցարիայում հանրաքվեի ինստիտուտի զարգացմանն ու կայացմանը, Հեղինակի կարծիքով, հենց այնպես ինքնաշխատ եղանակով Հանրաքվեի ինստիտուտը հանրապետություն այսպես ասած ներմուծելը ինքնին չի կարող վկայել ժողովրդաիշխանության իրացման արդյունավետ ձևի մասին, այլ ըստ Հեղինակի, դրան նպաստող բազմաթիվ գործոններ կան, որոնցից շատերը դեռևս հայկական իրականության մեջ ընկալված և ընդունված չեն: Մասնավորապես, Հեղինակի կարծիքով, Հանրաքվեի ինստիտուտի սակավ կիրառման հիմնական պատճառներից են՝ իրավաքաղաքական համարժեք մշակույթի բացակայությունը, քաղաքացիական հասարակության ձևավորման հարցում թույլ առաջընթացը, անգամ սոցիոլոգիական հարցումների արդյունքների նկատմամբ ձևավորված անվստահությունը և այլն:

Բացի այդ, ատենախոսության շրջանակներում քննարկման առարկա դարձնելով հանրաքվեի գիտական և օրենսդրական բնորոշումները, դրանց հիման վրա Հեղինակի կողմից տրվել է հանրաքվեի իր կարծիքով ավելի սպառիչ և ավելի <<պարզունակ>> սահմանումը, միաժամանակ առաջարկելով, որպեսզի հանրաքվեն դիտարկվի ***իրավա-***

սուբյեկտ քաղաքացիների կողմից հասարակական նշանակություն ունեցող հարցերի լուծման ձև արտահայտությամբ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և եզրահանգումներից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից

Հետազոտության տեսական հիմքը կազմել են Հանրաքվեի՝ որպես ժողովրդաիշխանության իրացման կառուցակարգերին, դրանց իրացման հիմնախնդիրներին նվիրված աշխատություններն ու այլ դոկտրինալ աղբյուրները:

Լիլիթ Մելիքսեթյանի ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ հանրաքվեի որպես սոցիալական և իրավական ինստիտուտների՝ դրանց ծագման, հարաբերակցության, փոխակերպման համալիր ուսումնասիրությունների արդյունքում Հեղինակին հաջողվել է կատարել կանխատեսում ապագայում հանրաքվեի զանգվածային և պարբերաբար կիրառման հնարավորության վերաբերյալ, ուսումնասիրվել է հանրաքվեի իրավական ինստիտուտի սահմանադրական իրավական պատմությունը՝ ըստ առանձնացված փուլային բաժանման:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են իմացության դիալեկտիկական, ձևական-իրավական, համեմատական-իրավական և այլ գիտական մեթոդներ, որոնց կիրառումը թույլ է տալիս ատենախոսի հետևությունները և առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել օրենսդրական բարեփոխումների, սահմանադրական իրավունքի, իրավունքի պատմության դասընթացներում, ինչպես նաև գործնականում նպաստել հանրաքվեի իրավական ինստիտուտին ուղղված իրավաստեղծ աշխատանքին:

Հեղինակն օգտվել է հայրենական և արտասահմանյան մեծաքանակ տեսական աղբյուրներից և իրավական փաստաթղթերից, ինչն, անշուշտ, հարստացրել է ատենախոսության բովանդակությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, հարկ է նշել, որ ատենախոսությունն աչքի է ընկնում շարադրանքի հստակությամբ, դրա բովանդակությունն արտացոլող դրույթների միջև գոյություն ունեցող տրամաբանական հաջորդականությամբ, ինչպես նաև Հեղինակի որոշ ինքնատիպ դատողություններով:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված գիտական հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրված ատենախոսությունը, ինչպես ցանկացած աշխատանք, զուրկ չէ վիճելի դրույթներից և առանձին թերություններից, որոնց վերաբերյալ ներկայացվում են հետևյալը.

1.Պաշտպանության ներկայացվող դրույթներից 2-րդ կետի ներքո արտացոլված դատողությունները մեր կարծիքով գիտական նորույթ չեն բովանդակում: Դրա շրջանակներում Հեղինակի կողմից սոսկ արձանագրվել է հետևյալ միտքը՝ *Ներկայացվել են Շվեյցարիան, որպես հանրաքվեի հայրենիք համարելու իրավաքաղաքական նոր փաստարկներ, որոնք գիտագործնական տեսանկյունից անհրաժեշտ են ընդհանրապես հանրաքվեի էությունը, կոնկրետ իրավիճակում ծագելու և տարածվածության աստիճանը համարժեք գնահատելու տեսանկյունից:* Մեր կարծիքով այն կարող է դիտարկվել որպես փաստարկում, բայց ոչ գիտական նորույթ: Բացի այդ, դրանից ելնելով ատենախոսության մեջ (էջեր 30-33) բավականին մանրամասնությամբ է Շվեյցարիային անդրադարձ կատարվել, քանի որ, եթե Հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունները հանրաքվեի ինստիտուտը տանում են շատ ավելի հեռու ժամանակները, հետևաբար, գտնում ենք, որ Շվեյցարիային առաձին անդրադառնալը պետք է պայմանավորված լիներ բացառապես հանրավքեի ինստիտուտի <<ամենաժողովրդավարական>> մոդելի գոյության հանգամանքով:

2. Թեև ատենախոսության կառուցվածքի վերաբերյալ դիտարկումները առանձնապես բովանդակության վրա ազդեցություն չեն կարող ունենալ, այնուամենայնիվ, գտնում ենք, որ թեկնածուական ատենախոսության օրենքով սահմանված ծավալներն հաշվի առնելով, աշխատանքի 4-րդ գլուխն ինքնուրույն ներկայացնելը նպատակահարմար չէ, առավելևս, որ 4-րդ գլխի բովանդակությունը այնպիսին է, որ կարող էր ներառվել 3-րդ գլխի տակ: Այսպես, 3-րդ գլխի վերնագիրն է՝ <<Տեղական հանրաքվեի սահմանադրական և օրենսդրական կարգավորման էվոլուցիան երրորդ հանրապետությունում>>, իսկ 4-րդ գլուխը վերաբերել է սահմանադրական փոփոխությունների համատեքստում հանրաքվեի կայացման հիմնահարցերին: Այստեղ ակնհայտ է, որ երրորդ հանրապետության ժամանակահատվածը իր մեջ ներառում է նաև 2015թ. սահմանադրական փոփոխությունները, հետևաբար և, առանձնացնելն ինքնանպատակ է եղել:

3. Ատենախոսության առաջին գլխի երկրորդ պարագրաֆում /էջեր 23-40/ ամենայն մանրամասությամբ անդրադարձ է կատարվել հանրաքվեի վերածննդին՝ որպես սահմանադրական-իրավական ինստիտուտ, միաժամանակ ներկայացնելով տարբեր գիտնականների կողմից առաջ քաշված մոտեցումներին: Ի տարբերություն աշխատանքի մյուս

գլուխներին և հատվածներին, Հեղինակին որպես ամփոփում չի հաջողվել սեփական դատողությունները շարադրելով ներկայացնել կոնկրետ հետևության: Այլ կերպ ասած, աշխատանքի այդ հատվածից հստակ չի երևում Հեղինակի կոնկրետ դիրքորոշումը:

4. Իհարկե այս նկատառումն առավելապես խորհրդատվական բնույթ է կրում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հեղինակը ատենախոսության տարբեր էջերում ներկայացրել է օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ, հետևաբար, աշխատանքը դրանից կշահեր, եթե Հեղինակը համակարգելով նման առաջարկությունները և որպես ՀԱՎԵԼՎԱԾ ներկայացվեր ինչպես ՀՀ սահմանադրության, այնպես էլ <<Հանրաքվեի մասին>> ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ: Լ. Մելիքսեթյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Լիլիթ Վահեի Մելիքսեթյանի <<Հանրաքվեի որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի բարելավման արդի հիմնահարցերը>> թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսի կարծիքին ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.02 մասնագիտությանը <<Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում), բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ՝ Ռ. ՄԱԽՄՈՒԴՅԱՆ

23.03.2020թ.

«Ռ.Մախմուդյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ» ՝

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ.Ռ.ՓՈԼԱԴՅԱՆ